ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 212

15 սեպտեմբերի 2020 թվականի N _ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13 -րդ հոդվածի դ) կետով՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության կապի ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

17.09.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. սեպտեմբերի 15
ք. Կապան

Հավելված
Սյունիքի մարզպետի
2020թ. սեպտեմբերի 15-ի
№212 Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Քաղաքացիական պաշտպանության մարզային կապի ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) գործում է ՀՀ Սյունիքի մարզպետարանում:
2. Ծառայությունը ստեղծվում է ՀՀ Սյունիքի մարզպետի՝ քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով:
3. Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն և 2017 թվականի ապրիլի 6-ի № 346-Ն որոշումներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:
4. Ծառայության գործունեության նպատակն է իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Ծառայության խնդիրներն են՝

1) քաղաքացիական պաշտպանության կապի ոլորտի միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի «ՄՇՏԱԿԱՆ», «ԲԱՐՁՐ» և «ԼՐԻՎ» պատրաստականության աստիճանների ժամանակ,

2) քաղաքացիական պաշտպանության համայնքային կապի ծառայությունների հետ փոխհամագործակցության կազմակերպումը, դրանց պատրաստվածությունն ու պահպանումը մշտական պատրաստականության վիճակում,

3) մարզպետարանի կողմից կառավարման մարմիններին և բնակչությանը ազդարարման օժանդակության ցուցաբերումը, ռազմական դրության ժամանակ կառավարման մարմիններին կապուղիներով ապահովման աշխատանքների համակարգումը,

4) կապի և տեղեկատվայնացման բնագավառներում զորահավաքային ծրագրերի մշակումն ու ռազմական դրության պայմաններում գործող հեռահաղորդակցական ցանցերի և կապի այլ միջոցների գործունեության համակարգումը:

6. Ծառայությունն իր խնդիրների կատարման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման կազմակերպում, վերլուծում և գնահատում, քաղաքացիական պաշտպանության պետին անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

2) քաղաքացիական պաշտպանության համայնքային կապի ծառայությունների հետ փոխհամագործակցության, խորհրդատվական, մեթոդական և ընդհանուր համակարգման աշխատանքների իրականացում,

3) խաղաղ ժամանակաշրջանում քաղաքացիական պաշտպանության համայնքային կապի ծառայությունների գործունեության ստուգման աշխատանքների իրականացում,

4) արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների հետևանքների գնահատում, դրա հիման վրա ծառայության պլանի ճշգրտում,

5) արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների հետևանքների հետախուզում, իրադրության գնահատում, վերլուծում, առաջարկությունների կայացում և հրամանների նախագծերի պատրաստում,

6) ռազմական դրության ժամանակ հուսալի կապի ապահովման աշխատանքների կոորդինացում,

7) ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության պետի հրամանով, ծառայության գործունեության ոլորտի այլ գործառույթների իրականացում:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության կապի մարզային ծառայության ղեկավար կազմի հաստիքացուցակը.

Գալյա Կարապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ, ծառայության պետ
Ռոմա Զաքարյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի ավագ մասնագետ, ծառայության պետի տեղակալ

Արմինե Բաբայան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի ավագ մասնագետ, անդամ
Վարդան Ակունց	«Վեոն Արմենիա» ՓԲԸ, փորձագետ /Գորիս, անդամ
Սամվել Ղոնյան	«Վեոն Արմենիա» ՓԲԸ, փորձագետ /Կապան, անդամ
Արարատ Հովհաննիսյան	«Վեոն Արմենիա» ՓԲԸ, փորձագետ/Սիսիան, անդամ
Ավետիս Ավագյան	«Վեոն Արմենիա» ՓԲԸ, փորձագետ/Մեղրի, անդամ
Լևոն Գաբրիելյան	«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ, աշխատանքի անվտանգության գծով ավագ մասնագետ, անդամ
Էդվարդ Ջաղացպանյան	«Յուքոմ» ՍՊԸ, օպերատիվ կառավարման թիմի ղեկավար, անդամ
Տիգրան Զալյան	«Յուքոմ» ՍՊԸ, ֆիզիկական անվտանգության մասնագետ, անդամ
Վարդան Սինանյան	«ՋԻԷՆՍԻ Ալֆա» ՓԲԸ, հարավային տարածքային կենտրոնի ղեկավար, անդամ
Երվանդ Բաղդասարյան	«ՋԻԷՆՍԻ Ալֆա» ՓԲԸ, հարավային տարածքային կենտրոնի ճարտարագետ, անդամ:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ, ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Ծառայության պետի իրավունքներն ու պարտականությունները.

1) խաղաղ ժամանակաշրջանում հրավիրում է խորհրդակցություններ ինչպես Ծառայության ողջ կազմով, այնպես էլ քաղաքացիական պաշտպանության համայնքային կապի ծառայությունների ներգրավվածությամբ,
2) քաղաքացիական պաշտպանության պետին ներկայացնում է առաջարկություններ քաղաքացիական պաշտպանության մարզային և համայնքային կապի ծառայությունների կազմավորումների ստեղծման, կառուցվածքի, քանակի, համալրման և հագեցման վերաբերյալ,
3) քաղաքացիական պաշտպանության պետին ներկայացնում է առաջարկություններ ծառայության գործունեության բարելավման վերաբերյալ,

4) ապահովում է քաղաքացիական պաշտպանության համայնքային կապի ծառայությունների պատրաստականության պլանային և արտապլանային ստուգումների անցկացումը,
5) քաղաքացիական պաշտպանության համայնքային կապի ծառայությունների աշխատանքների պլանավորման և միջոցառումների իրականացման գործում ապահովում է մեթոդական և գործնական օժանդակության ցուցաբերումը,
6) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ իրականացնում է կապի տրամադրման աշխատանքների ընդհանուր համակարգումը,
7) տալիս է հանձնարարականներ և իրականացնում է հսկողություն դրանց կատարման նկատմամբ,
8) ապահովում է քաղաքացիական պաշտպանության կապի համայնքային ծառայությունների, դրանց շտաբների ու կազմավորումների փոխհամագործակցությունը հանրապետական ծառայության հետ,
9) ապահովում է քաղաքացիական պաշտպանության կապի համայնքային ծառայությունների, դրանց շտաբների ու կազմավորումների փոխհամագործակցությունը հանրապետական ծառայության հետ,
10) կազմակերպում է Ծառայության շտաբի անդամների ազդարարումը,
11) ուսումնասիրում, ընդհանրացնում և տարածում է Ծառայության գործունեության առաջավոր փորձը:

9. Ծառայության պետի տեղակալի իրավունքներն ու պարտականությունները.

1) Ծառայության պետի բացակայության դեպքում փոխարինում է նրան,
2) կազմակերպում է Ծառայության անդամների ազդարարումը և հավաքը, Ծառայության անդամներին է փոխանցում քաղաքացիական պաշտպանության ազդանշանները,
3) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ, ըստ ներկայացված հայտերի համակարգում է կապի տեսակներով ապահովման աշխատանքները << կառավարության սահմանված կարգով և ժամկետներում,
4) ապահովում է կապը քաղաքացիական պաշտպանության համայնքային կապի ծառայությունների պետերի հետ,
5) փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման իրականացման համար օգտագործում է կապի, մարզային, գերատեսչական և այլ ցանցերը,
6) ապահովում է մարզի պահեստային կառավարման կետի և անձնակազմի համար նախատեսված պաշտպանական կառույցների կապի տեսակներով համալրվածությունը և մշտական պատրաստ վիճակի պահպանման աշխատանքները:
7) Ապահովում է Ծառայության անդամների ազդարարումը,
8) ապահովում է Ծառայության պետի որոշումների և հրամանների կատարումը,
9) մշակում է Ծառայության պլանը,

10) ելնելով ստեղծված իրավիճակից՝ ճշգրտում է քաղաքացիական պաշտպանության պլանի՝ իր մասով առաջնահերթ կարգով իրականացվող միջոցառումների ցանկը,
11) պլանավորում է համայնքային ծառայությունների անձնակազմի օպերատիվ և մարտական պատրաստությունը,
12) իրականացնում է քաղաքացիական պաշտպանության համայնքային կապի ծառայությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների ամփոփ վերլուծություն,

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ծառայության անձնակազմի ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին № 134-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» № 46-Ն որոշման համաձայն:

9/16/2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**